Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2018 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

**«Այբ» ավագ դպրոց**

Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

## ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **9** տպագիր և **1** դատարկ էջերից:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

*Ուշադրությո՛ւն. առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված սկզբնաղբյուր-փաստաթղթերը: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված սկզբնաղբյուր-փաստաթղթերում առկա փաստերով: Ձեր հղումներում նշե՛ք, թե տեքստի որ տողերից եք (փակագծերում նշելով տողերի համարները) վերցրել Ձեր մոտեցումը հիմնավորող փաստարկները:*

**Փաստաթուղթ 1** (6 միավոր)

**Ստորև տրված հատվածի հեղինակը հույն պատմիչ է:**

Կրասսոսը, երբ ներխուժեց Միջագետք, Օրոդեսը նրա մոտ դեսպաններ ուղարկեց՝ մեղադրելով նրան ներխուժման համար, և պահանջեց հայտնել պատերազմի պատճառները. միաժամանակ նա Սուրենին զորքով ուղարկեց նվաճված և ապստամբած շրջանները. քանզի ինքը մտադիր էր արշավելու Հայաստան, որը մի ժամանակ Տիգրանի երկիրն էր, որպեսզի Արտավազդը՝ Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագավորում էր այնտեղ, իր սեփական երկրի վիճակով մտահոգված՝ որևէ օգնություն չուղարկի հռոմեացիներին: Բայց Կրասսոսը պատասխանեց նրան, թե պատերազմի պատճառը կհայտնի Սելևկիայում. սա քաղաք է Միջագետքում: Եվ պարթևներից մեկը իր ձախ ափին մյուս ձեռքի մատներով խփեց ու նրան պատասխանեց, թե «ավելի հեշտ այստեղ մազեր կբուսնեն, քան դու կլինես Սելևկիայում»:

**Հարց Ա**

Ի՞նչ իրադարձությունների մասին է հիշատակում պատմիչը: Ի՞նչ ավարտ ունեցավ հռոմեացի զորավարի արշավանքը:

*Պատմիչը հիշատակում է Ք.ա. 1-ին դարի կեսերին հռոմեա-պարթևական հակամարտության և Հայաստանի դերի մասին, երբ հռոմեացի եռապետ, զորավար Մարկոս Կրասսոսը արշավեց պարթևական տերության դեմ: Գտնվելով հռոմեական և պարթեական հակամարտ տերությունների միջև՝ Հայաստանը ձգտում էր պահպանել չեզոքություն, երբեմն էլ դաշնակցել մեկի կամ մյուսի հետ՝ իր անվտանգությունը պաշտպանելու համար: Ք.ա. 53 թվականին Խառանի ճակատամարտում հռոմեական բանակը ջախջախիչ պարտություն կրեց, և Կրասսոսը սպանվեց: Արտավազդի հեռատես արտաքին քաղաքականության շնորհիվ Մեծ Հայքի թագավորությունը պահպանեց իր անկախությունն ու անվտանգությունը:*

**Հարց Բ**

Ստեղծված իրավիճակում ինչպե՞ս վարվեց հայոց արքան: Ի՞նչ եք կարծում, նրա որոշումը ճի՞շտ էր, թե՞ սխալ: Հիմնավորե՛ք պատասխանը սկզբնաղբյուրի տեղեկություններով և ձեր գիտելիքներով:

*Ինչպես ասվում է աղբյուրում, երբ Կրասսոսը ներխուժում է Միջագետք, Պարթևստանի արքա Օրոդեսը Կրասսոսի դեմ ուղարկում է Սուրեն զորավարի զորքը, իսկ ինքը մտադիր էր արշավելու Հայաստան, որպեսզի թույլ չտար հայոց Արտավազդ արքային կատարել Հռոմի հանդեպ իր*

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

*դաշնակցային պարտականությունները: Արտավազդը զորավար Մարկոս Կրասսոսին առաջարկել էր արշավել Պարթևաստան Հայաստանի վրայով, քանի որ լեռնոտ տեղանքում նրա զորքը ապահով կլիներ պարթևական հեծելազորի գրոհներից, և հայկական կողմը կօգներ հռոմեականին: Կրասսոսը մերժել էր Արտավազդի առաջարկը և արշավել Միջագետք: Նկատի ունենալով Կրասսոսի սխալ մարտավարությունը՝ Արտավազդը, իբրև հեռատես գործիչ, դաշինք կնքեց Օրոդես թագավորի հետ, որն ամրապնդվեց Արտավազդի քրոջ և Օրոդեսի որդի Բակուրի ամուսնությամբ:*

Առաջադրանք 2 (7 միավոր)

Փաստաթուղթ 1
Ստորև տրված է հատված հայ պատմաբանի աշխատությունից:

Բեռլինի վեհաժողովից հետո հայ քաղաքական գործիչները ևս եկան այն եզրակացության, որ սուլթանական Թուրքիայի լծից Հայաստանը կարող է ազատագրվել ոչ թե եվրոպական տերություններին զանազան «աղերսագրեր» ուղղելու միջոցով, այլ ազատագրական պայքարի շնորհիվ: Հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանի հանրահայտ արտահայտությունը երկաթե շերեփի բացակայության մասին դարձավ հաջորդ սերունդների պայքարի նշանաբանը: Մ. Խրիմյանը, որը Հայաստանի ինքնավարության հարցում մեծ հույսեր էր կապում արևմտյան խոշոր տերությունների, մասնավորապես՝ Անգլիայի հետ, հանգում է այն համոզմունքին, որ Հայաստանը կարող է ազատագրվել միայն զինված ապստամբության միջոցով:

Փաստաթուղթ 2
Ստորև տրված է հատված Բեռլին մեկնած հայկական պատվիրակության անդամի գրքից:

Մենք շատ ավելի շահեցինք Բեռլինում, քան Սան Ստեֆանոյում, և անհնար էր ավելին շահել լեզվով և գրիչով:

Սան Ստեֆանոյի հոդվածն աղաչանքներից էր ծնվել. Բեռլինն ամրապնդեց այն իր վճռով:

Սան Ստեֆանոյի հոդվածով միայն Ռուսաստանն էր պարտավորություն վերցնում Թուրքիայի հայ ժողովրդի նկատմամբ. Բեռլինի հոդվածով Գերմանիան, Ավտրո-Հունգարիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան և Ռուսաստանը միացան նույն գործի համար:

Հարց Ա
Ե՞րբ են կնքվել փաստաթղթերում հիշատակվող պայմանագրերը: Ինչո՞վ էին դրանք կարևոր հայության համար:

*Փաստաթղթերում հիշատակվող Սան-Ստեֆանոյի պայմանագիրը կնքվել է 1878 թ. փետրվարի 19-ին, որով ավարտվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Սակայն Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հարցին վերջնական լուծում չտվեց, ուստի որոշվեց Եվրոպային վերաբերող հարցերը քննարկել Բեռլինի համաեվրոպական վեհաժողովում (1878 թ. հունիսի 1-ից հուլիսի 1-ը): Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը վերաբերում էր հայերին, որով Օսմանյան իշխանությունները պարտավորվում էին բարեփոխումներ անցկացնել ռուսների գրաված տարածքներում և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից: Ռուսաստանին էին անցնում Կարսը, Արդահանը, Բաթումը, Բայազետը: Սան*

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

*Ստեֆանոյի 16-րդ հոդվածը կարևոր էր հայության համար քանի, որ առաջին անգամ այնտեղ հիշատակվում էր Հայաստան տեղանունը: Բեռլինի կոնգրեսը, և մասնավորապես՝ 61-րդ հոդվածը, առավել կարևոր էր հայության համար, քանի որ Հայկական հարցը դրվում էր միջազգային դիվանագիտական սեղանին՝ իբրև Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, որով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել հայկական տարածքներում և ապահովել հայերի անվտանգությունը: Հայերի դրության բարելավման հարցն այլևս միայն Ռուսաստանի պատասխանատվության ներքո չէր, այլև եվրոպական 6 տերությունների՝ Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա, Իտալիա:*

Հարց Բ

Փաստաթղթերի հեղինակները միևնույն իրադարձության վերաբերյալ հայտնում են տարբեր կարծիքներ: Ո՞ր կարծիքի հետ եք համաձայն: Հիմնավորե՛ք պատասխանը՝ օգտագործելով փաստաթղթերի տեղեկությունները և ձեր գիտելիքները:

Այս հարցի պատասխանը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու են նրա՝ վկայությունների հետ աշխատելու հմտությունը և իր դիրքորոշումը փաստերով հիմնավորելու կարողությունը:

Առաջադրանք 3 (6 միավոր)

Ստորև բերված հատվածի հեղինակը Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունին է:

1920 թ. նոյեմբերին թուրքերը գրավել էին արդեն Ալեքսանդրապոլը:

Միաժամանակ հայ բոլշևիկները, ռուսական կարմիր զորքերի գլուխն անցած, մտան Իջևան ու Դիլիջան:

Կա՞ր արդյոք որևէ համաձայնություն բոլշևիկների ու թուրքերի միջև:

Մեր շարքերում շատ տարածված է այդ համոզմունքը: Կարծում եմ, սակայն, որ սխալ է այդ: Համենայն դեպս, դրական ապացույց չկա: Հավանական է, որ բոլշևիկյան գործակալները աշխատել են քանդել ներսից մեր բանակը: Բայց դրա համար հարկավոր չէր որևէ համաձայնություն թուրքերի հետ. հետո, մեր պարտությունն արագացնելու համար շատ էլ կարևոր չէր բոլշևիկների միջամտությունը: Բոլշևիկների դավադրությունը չէր մեր պարտության պատճառը, ոչ իսկ թուրքերի ուժը (որ շատ էլ մեծ չէր այն ժամանակ), այլ մեր սեփական ապիկարությունը:

Հարց Ա

Ի՞նչ իրադարձության մասին է խոսում հեղինակը: Ինչո՞վ ավարտվեց այն:

*Հովհաննես Քաջազնունին ներկայացնում է Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման գործընթացը: Իբրև խորհրդային կարգերի հաստատման գործընթացի նպաստող նախապայման՝ հեղինակը ներկայացնում է 1920 թ. Հայաստանի Հանրապետության ծանր վիճակը՝ պայմանավորված թուրք-հայկական պատերազմով: Մյուս կողմից Կարմիր բանակն արդեն իսկ խորհրդայնացված*

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

*Ադրբեջանի հետ հարձակումներ էր կատարում Տավուշի և Արցախի ուղղությամբ: Այս գործընթացն ավարտվեց Հայաստանում խորհրդային կարգերի հռչակմամբ, որը տեղի ունեցավ Սարգիս Կասյանի նախագահությամբ ձևավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի՝ նոյեմբերի 29-ին Իջևան ներխուժմամբ: ՀՀ խորհրդայնացումն ամրագրվեց դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված համաձայնագրով:*

Հարց Բ

Օգտագործելով աղբյուրի տեղեկությունները և ձեր գիտելիքները՝ բացատրեք հայերի պարտության պատճառները:

*Ըստ հեղինակի՝ հայերի պարտության պատճառն ավելի շատ ներքին անկազմակերպվածությունն էր, քան արտաքին գործոնները, օրինակ՝ քեմալա-բոլշևիկյան համագործակցությունը: Սակայն միևնույն ժամանակ պետք է փաստենք, որ Հովհաննես Քաջազնունին ամբողջությամբ չի բացառում թուրք-բոլշևիկյան համագործակցության դերը, քանի որ ըստ նրա՝ այդ ժամանակ մարդկանց շրջանում բավականին տարածված էր այդ վարկածը, սակայն արժանահավատ փաստերի բացակայության պատճառով Հովհաննես Քաջազնունին ավելի շատ հակված է պարտության խնդիրները տեսնելու ներքին ապիկարության մեջ:*

Պատասխանի շարունակությունը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու են նրա՝ վկայությունների հետ աշխատելու հմտությունը և իր դիրքորոշումը փաստերով հիմնավորելու կարողությունը:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4** (6 միավոր)

**Մեջբերված հատվածը Վիտենբերգի տաճարի դարպասին փակցված Մարտին Լյութերի 95 դրույթներից է: Կարդացեք այն և պատասխանեք տրված հարցերին՝ օգտագործելով ինչպես աղբյուրի տեղեկությունները, այնպես էլ թեմայի վերաբերյալ ձեր գիտելիքները:**

«Յուրաքանչյուր քրիստոնյա, եթե նա անկեղծորեն զղջում է, առանց ինդուլգենցիայի էլ ստանում է լիակատար թողություն: Եկեղեցու ճշմարիտ գանձն, իհարկե, մեղքերի թողությունը չէ, այլ՝ սրբազան Ավետարանը... Քրիստոնյաներին պետք է սովորեցնել, որ նա, ով տեսնում է կարիքավորին և անտեսելով նրան ինդուգենցիա է գնում, արժանանում է ոչ թե Հռոմի պապի ներմանը, այլ՝ Աստծո զայրույթին: Ասել, թե պապի զինանշանով զարդարված և տաճարներում դրված թողության խաչը Քրիստոսին հավասար արժեք ունի, սրբապղծություն է»:

**Հարց Ա**

Ինչի՞ դեմ էին ուղղված Մարտին Լյութերի դրույթները և ի՞նչ գաղափարներ էր նա առաջ քաշում:

*Գերմանացի նշանավոր հոգևորական, աստվածաբան և բարեփոխիչ Մարտին Լյութերի (1483-1546) հրապարակած 95 դրույթներն ուղղված էին Կաթոլիկ եկեղեցու վարդապետությունների ու իշխանության չարաշահման դեմ և հարց էին բարձրացնում եկեղեցում արմատական բարեփոխման վերաբերյալ: Միջին դարերում Եվրոպայի մեծագույն մասը գտնվում էր Հռոմի պապի և Կաթոլիկ եկեղեցու կրոնաբարոյական վերահսկողության ներքո: Մարտին Լյութերը հակադրվեց կաթոլիկությանը՝ պնդելով, որ Եկեղեցին իրավունք չունի զանգվածային կերպով կազմակերպելու մեղքերի թողություն, և հոգևոր փրկությունը հնարավոր է միայն հավատի միջոցով անկախ սոցիալական ծագումից ու գրված դիրքից: Քանզի ոչ ոք առավելություն չունի ոչ մեկի նկատմամբ, բոլոր մարդիկ, այդ թվում և հոգևորականությունը, հավասար են: Ուստի, ինչպես տրված է աղբյուրում, յուրաքանչյուր քրիստոնյա, եթե անկեղծորեն զղջում է, առանց ինդուլգենցիայի էլ կստանա մեղքերի լիակատար թողություն: Իսկ ինդուլգենցիա գնողը կարժանանա ոչ թե Հռոմի պապի ներմանը, այլ Աստծո զայրույթին: Ըստ Լյութերի Եկեղեցու իրական գործառույթը ոչ թե մեղքերի թողությունն է, այլ Աստվածաշնչի վարդապետությունները քրիստոնյաներին սովորեցնելը: Ըստ Էության Լյութերը հանդես էր գալիս Կաթոլիկ եկեղեցու իշխանության դեմ նրան մեղադրելով նաև կռապաշտության մեջ:*

**Հարց Բ**

Ի՞նչ շարժման սկիզբ հանդիսացան նրա գաղափարները, և ի՞նչ տարածում ունեցավ այդ շարժումը. բերե՛ք կոնկրետ օրինակներ:

*Մարտին Լյութերը Բողոքականության հիմնադիր հայրն է: 1517 թ. հոկտեմբերին Վիտենբերգում Լյութերի հրապարակած 95 դրույթները սկիզբ դրեցին Ռեֆորմացիային: Լյութերն առաջինն էր, ով Աստվածաշունչը լատիներենից թարգմանեց գերմաներեն և այդպիսով Սուրբ գրքի ընթերցումը հասանելի և հասկանալի դարձրեց հանրության առավել լայն շրջանակների համար: Ռեֆորմացիայի շարժման անմիջական պատճառ դարձավ Հռոմի կաթոլիկ եկեղեցու կողմից ինդուլգենցիաների վաճառքը և փրկության համար գումարների հավաքագրումը: 16-րդ դարում այս զանգվածային կրոնական և հասարակա-քաղաքական շարժումը նպատակավորված էր ռեֆորմացնել*

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

*քրիստոնեությունը Աստվածաշնչյան վարդապետություններին համապատասխան: Ռեֆորմացիայի արդյունքում Եվրոպայում առաջացավ բողոքական եկեղեցին: 16-17-րդ դարերում Բողոքականությունը երկարատև կրոնական պատերազմների և հակամարտությունների արդյունքում արմատավորվեց Կենտրոնական և Հյուսիսային Եվրոպայում, Շվեյցարիայում, Նիդերլանդներում, Անգլիայում և հսկայական ազդեցություն ունեցավ Եվրոպայի հետագա պատմական զարգացման վրա:*

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5 (7 միավոր)

Փաստաթուղթ 1
Հատված Ազգերի լիգայի Հոդված 16-ից.

Եթե Ազգերի լիգայի անդամը պատերազմ է սանձազերծում, հակառակ Կանոնադրությամբ իր ստանձնած պարտավորությունների, ապա նա դիտարկվում է որպես Լիգայի մյուս անդամների հանդեպ պատերազմական գործողությունների ձեռնարկող: Վերջիններս պարտավորվում են անմիջապես խզել նրա հետ առևտրական և ֆինանսական բոլոր հարաբերությունները:

Այդ դեպքում Խորհուրդը պարտավոր է առաջարկել տարբեր շահագրգիռ Կառավարություններին ռազմական, ծովային կամ օդային ուժերի այն թվակազմը, որի միջոցով Լիգայի անդամները, ըստ պատկանելիության, պետք է մասնակցեն ռազմական ուժերի ստեղծմանը՝ Լիգայի Կանոնադրության պաշտպանությունն ապահովելու համար:

Բացի դրանից Լիգայի անդամները... անհրաժեշտ որոշումներ են կայացնում, որպեսզի հեշտացնեն իրենց տարածքով Լիգայի այն անդամների ուժերի անցման համար, ովքեր մասնակցում են Լիգայի կանոնադրության պահպանմանն ուղղված ընդհանուր միջոցառումներում:

Կանոնադրությունից բխող որևէ պարտավորության խախտման դեպքում Լիգայի ցանկացած անդամ կարող է հեռացվել Լիգայից: Ազգերի լիգայի կազմից հեռացումը կատարվում է Խորհրդում քվեարկության միջոցով:




MORAL SUASION.

THE RABBIT. "MY OFFENSIVE EQUIPMENT BEING PRACTICALLY *NIL*, IT REMAINS FOR ME TO FASCINATE HIM WITH THE POWER OF MY EYE."

Փաստաթուղթ 2

Ստորև հուլիսի 28-ին Բրիտանական Punch երգիծական հանդեսում տպագրված ծաղրանկար է, որը ներկայացնում է Ազգերի Լիգայի մի մեկնաբանություն:

Խորագիր՝ Բարոյական համոզում

Օձի վրա գրված է՝ *«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃ»*
Ճագարի վրա. *«ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ»*
Նկարի տակ. *Ճագարը մտածում է - «Իմ հարձակվողական միջոցները գործնականում զրոյական են: Ինձ մնում է հմայել նրան իմ հայացքի ուժով»:*

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

Հարց Ա

Ե՞րբ է հիմնադրվել Ազգերի լիգան, ու՞մ կողմից: Ներկայացրեք Ազգերի լիգայի կառույցը և գործառույթները:

*Ազգերի լիգան հիմնադրվել է 1919 թ. Առաջին աշխարհամարտից հետո: Այն առաջին միջազգային համապարփակ կազմակերպությունն էր, որը նպատակ ուներ պահպանել խաղաղությունը և զարգացնել ազգերի միջև համագործակցությունը: Ազգերի լիգայի ստեղծման գաղափարն առաջ քաշեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը 1918 թ. հունվարին հռչակած իր «տասնչորս կետերի» մեջ: Ազգերի լիգայի կանոնադրությունը հաստատեց Փարիզի խորհրդաժողովը 1919 թ. հունվարի 28-ի Վերսալի պայմանագրով: Չնայած այն նախաձեռնվել էր Վուդրո Վիլսոնի կողմից, ԱՄՆ-ը երբեք չմիացավ այս կազմակերպությանը, քանզի ԱՄՆ-ի Սենատը չվավերացրեց Վերսալի պայմանագիրը:*

*Ազգերի լիգայի գլխավոր կառուցվածքային մարմիններն էին Ասամբլեան (Ընդհանուր ժողով), Ազգերի լիգայի խորհուրդը և Քարտուղարությունը (Գլխավոր քարտուղարը), որոնց նստավայրը Շվեյցարիայի Ժնև քաղաքն էր:*

Հարց Բ

Ի՞նչ դիրքորոշում ունի ծաղրանկարի հեղինակը Ազգերի լիգայի խաղաղապահ գործունեության վերաբերյալ: Որքանո՞վ եք համաձայն ծաղրանկարում ներկայացված դիրքորոշման հետ: Բացատրե՛ք ձեր պատասխանը՝ հիմնավորելով աղբյուրների տվյալներով և ձեր գիտելիքներով:

*Բրիտանական երգիծական հանդեսում տպագրված ծաղրանկարը ներկայացնում է Ազգերի Լիգայի անզոր դրությունը և միջազգային սպառնալիքներին պատասխանելու անընդունակությունը: Տվյալ ծաղրանկարում «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃ»-երը ներկայացված են գալարվող և ագրեսիվ օձի տեսքով, որը սպառնում է խաղաղությանը: Իսկ Ճագարի տեսքով պատկերված Ազգերի Լիգան անկարող է դիմակայել միջազգային մարտահրավերներին և սպառնալիքներին: Ճագարի հետևյալ դիրքորոշումը՝ «Իմ հարձակվողական միջոցները գործնականում զրոյական են: Ինձ մնում է հմայել նրան իմ հայացքի ուժով», խորհրդանշում է, որ Ազգերի Լիգան չունի որևէ գործնական լծակներ իր գործառույթները իրականացնելու համար և խաղաղությունը իրականում շարունակում է կախված լինել հակամարտող կողմերի բարի կամքից:*

*Ազգերի լիգայի կանոնադրության 16-րդ հոդվածի տեղեկությունը վկայում է այն մասին, որ Ազգերի լիգայի որոշումները օրենքի ուժ չունեին և պարտադիր չէին անգամ նրա անդամների համար, և նման դեպքում «խորհուրդը կարող էր միայն **առաջարկել** տարբեր շահագրգիռ Կառավարություններին ռազմական, ծովային կամ օդային ուժերի այն թվակազմը, որի միջոցով Լիգայի անդամները, ըստ պատկանելիության, պետք է մասնակցեն ռազմական ուժերի ստեղծմանը՝ Լիգայի Կանոնադրության պաշտպանությունն ապահովելու համար»: Այս խնդիրը ակնհայտորեն դրսևորվեց 1930–ական թթ., երբ Իտալիան, Գերմանիան և Ճապոնիան սկեցին իրենց ծավալապաշտական քաղաքականությունը: Լիգան անկարող եղավ պաշտպանել անգամ իր անդամների անվտանգությունը, օրինակ՝ Եթովպիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի, Չինաստանի:*

Հարցի պատասխանը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու է նրա՝ երկու վկայությունների հետ աշխատելու, դրանց տեղեկությունները համադրելու կամ հակադրելու հմտությունը, ինչպես կկարողանա իր գիտելիքները օգտագործելով՝ դիրքորոշումը հիմնավորող փաստարկված դատողություններ կատարել:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018